

[1] Ռուրս գրման ամսաթիվ			Հաշիվ ապրանքագիր (ծառայությունների մատուցման, աշխատանքների կատարման)	[2] Սերիա	[3] Համար
19	Մայիս	2020 թ.		Բ	9139877755
[4] Մատուցման ամսաթիվը				Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի	
19	Մայիս	2020 թ.		Սերիա	Համար
			Ճշգրտվող հաշիվ ապրանքագրի դուրս գրման ամսաթիվ		
Պայմանագիր			[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար	
[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)					

Ծառայություններ մատուցող (աշխատանքներ կատարող) անձի								
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	3	5	3	8	1	1	2
[9] Անվանումը	«ՎԻ ԳՐՈՒՊ» Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն (ՍՊԸ)							
[10] Բանկային տվյալները	Ամերիաբանկ ՓԲԸ		N 1570015111280200					
[11] Գտնվելու վայրը (հասցեն)	Յրդ միկ. շրջ. 23 18							
[12] Լրացուցիչ տվյալներ								

Ծառայություններ (աշխատանքներ) ստացող անձի								
[13] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	5	0	6	6	3	4
[14] Անվանումը	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆ» Պետական կառավարչական հիմնարկ							
[15] Բանկային տվյալները	ՀՀ ֆին. նախ. աշխ. գործ. վարչ.		N 900011180081					
[16] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ ՎԱՋԳԵՆ ՄԱՐԳՍՅԱՆ Փ. 5							
[17] Լրացուցիչ տվյալներ								
[18] Ում միջոցով	Անուն, ազգանուն							
	Լիազորագիր		Համար					
			Ամսաթիվ					

[19] Ծառայությունների մատուցման (աշխատանքների կատարման) ծավալի և վճարման ենթակա գումարի հաշվարկը					
№ ՇՊ	Ծառայությունների (աշխատանքների) անվանումը (ըովանդակությունը)	Չափի միավորը	Ընդհանուր կամ ծավալը կամ քանակը	Միավորի գինը	Սըծերը
1	2	3	4	5	6
1	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	4	1000	4000
2	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	18	1000	18000
3	Ռուսերեն-հայերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	121	1000	121000
4	Հայերեն-պարսկերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	3	1800	5400
5	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	51	1000	51000
6	Հայերեն-ռուսերեն լեզվի գրավոր թարգմանություն	էջ	3	1000	3000
ԸՆԴՀԱՆՈՒՐ					202400

Ծառայություն մատուցող (աշխատանք կատարող) **STEPANYAN HMAYAK 2301850293**
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

Ծառայություն (աշխատանք) ստացող **ՍՏԱՆԱՍՅԱՆ**
(ստորագրությունը, անունը, ազգանունը)

19/05/2020 17:05:17

ՈՐՈՇՈՒՄ

թարգմանիչ հրավիրելու մասին

06 ապրիլի 2020թ.

ք.Երևան

Ես, ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության ավագ դատախազ Ա.Հովհաննիսյանս, ստանալով ՀՀ գլխավոր դատախազի կարգադրությունը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ Բատիր Անիյազովի հրավրվելու ապահովելու վերաբերյալ կարգադրությունը և ուսումնասիրելով թիվ 21/32-1072-17 վարույթի նյութերը,
ՊԱՐԶԵՑԻ՝

07.12.2017թ. Թուրքմենստանի իրավասու մարմինների կողմից հետախուզվող Բատիր Անիյազովը հայտնաբերվել է Հայաստանի Հանրապետության իրավապահ մարմինների կողմից:

06.04.2020թ. ՀՀ գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել Բ.Անիյազովի հանձնումը Թուրքմենստանի իրավասու մարմիններին թույլատրելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազի նույն օրվա կարգադրությամբ հանձնարարվել է ապահովել Բատիր Անիյազովի՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքի իրացումը:


ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ թարգմանիչը պարտավոր է ստորագրությամբ հաստատել (...) քրեական գործով վարույթին մասնակցող անձանց հանձնվող փաստաթղթերում թարգմանության ճշտությունը:

Նկատի ունենալով, որ Բատիր Անիյազովը չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, իսկ Հնայակ Ստեփանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնահասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով և 478.4-րդ հոդվածի 2-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ


1. Բատիր Անիյազովի հանձնման թույլատվության վերաբերյալ որոշման ոռուերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հնայակ Ստեփանյանին (ՀՀ քաղաքացու անձնագիր AM 0679214, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախագրուչացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական
համագործակցության վարչության ավագ դատախազ  Ա.Լ.Նուխանյան

Սրանց սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանաբերության մասին նախագրուչացված եմ:

Թարգմանիչ՝

Հ.Ստեփանյան 

«06» ապրիլի 2020թ.

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

09 ապրիլի, 2020թ.

ք.Բջևան

Տավուշի մարզի դատահազոթյան դատահազ, արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ Զ. Ն. Բարսյանս, ուսումնասիրելով Ժուրաբեկ Յակոբովի հանձնման միջնորդությունը և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2020 թվականի մարտի 11-ին ժամը 15:55-ին, ՀՀ ԱԱԾ ԱԶ Բագրատաշենի սահմանապահ վերահսկողության բաժնից ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի Բագրատաշենի բաժանմունք քերական է ենթարկվել Ժուրաբեկ Շողմունքեկովի /Շողմունովի/ Յակոբովը /ծնված 28.06.1979թ., Տաշիկաբանի Հանրապետության քաղաքացի/, ով 2019 թվականի նոյեմբերի 19-ից Տաշիկաբանի Հանրապետության իրավասու մարմնի կողմից հետախուզվում է ՏՀ քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 4-րդ մասի <<Բ>> կերի հարկանիշներով /սոսանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելու համար/, իսպանման միջոցը՝ կալանավորում:

2020 թվականի մարտի 11-ին՝ ժամը 18:10-ին, Ժուրաբեկ Յակոբովը ձերբակալվել է և փեղափոխվել ՀՀ ոստիկանության Նոյեմբերյանի բաժնի ՁՊՎ:

Տավուշի մարզի ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանի՝ 2020 թվականի մարտի 13-ի որոշմամբ Ժուրաբեկ Յակոբովի նկարմամբ կիրառվել է ժամանակավոր կալանավորում՝ 40 օր ժամկետով:

2020 թվականի ապրիլի 8-ին Տաշիկաբանի Հանրապետությունից արացվել է Ժուրաբեկ Յակոբովին Տաշիկաբանի Հանրապետության քրեական օրենսգրքի 247-րդ հոդվածի 4-րդ մասի <<Բ>> կերի հարկանիշներով (սոսանձնապես խոշոր չափերով խարդախություն կատարելը) քրեական հետապնդման ենթարկելու նպատակով Տաշիկաբանի Հանրապետության իրավապահ մարմիններին հանձնելու մասին միջնորդությունը:

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում քրեական դատավարությունը փարվում է հայերեն, իսկ Հնայակ Սյրեփանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառնություն է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,


ՈՐՈՇԵՑԻ

1. Ժուրաբեկ Յակոբովի հանձնման միջնորդության և կից փաստաթղթերի հայերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հնայակ Սյրեփանյանին (ՀՀ քաղաքացու նույնականացման համար 000931923, որակավորումը հաստատող փաստաթուղթ՝ 10.06.2013թ. ՀՀ արդարադատության

նախարարի տեղեկանք) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պարժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապարիկից երեքհարյուրապարիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Տավուշի մարզի դատախազության դատախազ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝



Ջ. Ն. Բամբայան

Սրանցա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատախազության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարտասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



Հմայակ Սրեփանյան

« 08 » ապրիլի 2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

15 ապրիլի 2020թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով ՀՀ տարածքից դուրս հանցագործություն կատարած և ՀՀ տարածքում ձերբակալված ժորա Արամայիսի Ավետիսյանի վերաբերյալ ստացված փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարությանն առընթեր ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի և Շիրակի մարզային վարչության Արթիկի բաժինների աշխատակիցների համատեղ ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում, 2020 թվականի մարտի 23-ին՝ ժամը 18³⁰-ին, Երևան քաղաքի Անդրանիկի 74-րդ հասցեի մոտից հայտնաբերվել և ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Մալաթիայի բաժին է բերման ենթարկվել Ոսկրահնայի Հանրապետության (այսուհետ՝ ՌԽ) քաղաքացի, այդ երկրի քրեական օրենսգրքի 146-րդ հոդվածի 3-րդ մասի (մի խումբ անձանց կողմից մարդուն առևանգելը), 187-րդ հոդվածի 4-րդ մասի (ավազակությունը), 189-րդ հոդվածի 4-րդ մասի (կազմակերպված խմբի կողմից շորթումը), 257-րդ հոդվածի (բանդիտիզմը) և 289-րդ հոդվածի 3-րդ մասի (ավտոմեքենայի առևանգելը) մեղադրանքով, 2019 թվականի դեկտեմբերի 4-ից հետախուզման մեջ գտնվող, ազգությամբ հայ, 05.05.1988թ. ծնված ժորա Արամայիսի Ավետիսյանն, ով նույն օրը՝ ժամը 21¹⁵-ին ձերբակալվել է:

Ժորա Ավետիսյանի հայտնաբերման վերաբերյալ փաստաթղթերը, 2020 թվականի մարտի 23-ին, փոխանցվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազություն:

Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի 2020 թվականի մարտի 26-ի թիվ ԵԴ/0198/06/20 որոշմամբ բավարարվել է Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության միջնորդությունը ժորա Ավետիսյանի նկատմամբ 30 (երեսուն) օր ժամկետով ժամանակավոր կալանավորում կիրառելու մասին:

ՀՀ գլխավոր դատախազություն է ստացվել ժորա Ավետիսյանի վերաբերյալ միջնորդությունը և համապատասխան փաստաթղթերը:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ անհրաժեշտ է ստցված փաստաթղթերի հայերեն թարգմանությունը, իսկ Հմայակ Ստեփանյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճարել դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Փաստաթղթերի հայերեն հաստատված գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հմայակ Ստեփանյանին (ID CARD՝ 000931923, տրված 05.02.2013թ., 006-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:
2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
առաջին դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

«15» 2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

17 ապրիլի 2020թ.

քաղաք Երևան

Երևան քաղաքի Մնվաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազի տեղակալ, արդարադատության առաջին դասի խորհրդական Ա.Գ. Կոստանդյանս, ուսումնասիրելով Իսլամական Հանրապետության «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար կալանավորված **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** նկատմամբ խափանման միջոցը փոփոխելու մասին 2020 թվականի ապրիլի 17-ի որոշումը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի՝

Իսլամական Հանրապետության «Կաշառքի, յուրացման և խարդախության կատարման համար պատժի խստացման մասին» օրենքի 1-ին հոդվածի հատկանիշներով նախատեսված հանցագործության կատարման համար կալանավորված **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** վերաբերյալ 2020 թվականի ապրիլի 17-ի որոշում է կայացվել նրա նկատմամբ ընտրված խափանման միջոց կալանավորումը փոփոխելու և որպես խափանման միջոց ստորագրություն չհեռանալու մասին ընտրելու վերաբերյալ:

Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի՝ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության լեզուն հայերենն է:

Հաշվի առնելով, որ **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** չի տիրապետում քրեական դատավարության լեզվին, իսկ Հրանուշ Թախմասյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում, և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատականի 2017 թվականի մայիսի 4-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումներին, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 83-րդ հոդվածներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. **ՇԱՀՆԱՄ ՀԱՇԵՄԻ ԱՍԳԱՐՓՈՒՐ ԹԱՐԻՆԻ** խափանման միջոցը փոփոխելու մասին 2020 թվականի ապրիլի 17-ի որոշումը և ստորագրություն չհեռանալու մասին արձանագրությունը նրան հասու լեզվով հանձնելու համար, պարսկերեն գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ հրավիրել Հրանուշ Թախմասյանին (անձնագիր՝ AN սերիայի թիվ 0780981, տրված 22.12.2013թ., 029-ի կողմից, Երևանի

պետական համալսարանի կողմից տրված դիպլոմ՝ РВ սերիայի թիվ 013781, տրված 05.07.1990թ.) և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքների և պարտականությունների հետ:

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Վարչական շրջանի դատախազի
տեղակալ, արդարադատության
երկրորդ դասի խորհրդական

Ա. Կոստանդյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները: Իմ իրավունքներն և պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պարասխանալուծության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝

«...17...».....04..... 2020

ՈՐՈՇՈՒՄ
ԹԱՐԳՄԱՆԻՉ ՀՐԱՎԻՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

17-ը ապրիլի, 2020թ.

ք.Էջմիածին

«Արմավիրի մարզի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Թ.Հարությունյան» ուսումնասիրելով թիվ 57179419 քրեական գործի նյութերը,

ՊԱՐԶԵՑԻ՝

2019 թվականի հունիսի 18-ին՝ ժամը 12:00-ին, Արմենուհի Աբգարի Սարգսյանը ոստիկանության Վաղարշապատի բաժնում հաղորդում է տվել այն մասին, որ 2019 թվականի հունիսի 17-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, ոմն Ռոբերտը, այցելել է իր՝ Էջմիածին քաղաքի Մովսես Խորենացի փողոցի 26-րդ շենքի 36-րդ բնակարան՝ այն ձեռք բերելու նպատակով և օգտվելով իր անուշադրությունից, բնակարանի ննջասենյակում՝ պատին ամրացված ապակյա տակդիրի վրա դրված, գարդատուփի միջից գաղտնի հափշտակել է թվով 4 հատ ոսկյա մատանի և թվով 1 հատ ոսկյա շրթա՝ պատճառելով խոշոր չափերի հասնող՝ 1.500.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Դեպքի առթիվ 28.06.2019թ.-ին ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է քրեական գործ:

09.07.2019թ.-ին Ազիզ Ռզաի Թամոյանը բերման է ենթարկվել ՀՀ ոստիկանության Վաղարշապատի բաժնի գողություն կատարելու կասկածանքով: Նույն օրը Ազիզ Ռզաի Թամոյանը ձերբակալվել է:

10.04.2020թ. Ա.Թամոյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1.1 կետով /11 դրվագ/:

10.04.2020թ. թիվ 57179419 քրեական գործով կազմվել է մեղադրական եզրակացություն և նույն օրը ուղարկվել է Արմավիրի մարզի դատախազություն:

Նկատի ունենալով, որ քրեական դատավարության լեզվին չտիրապետող մեղադրյալին հանձնվում է թարգմանչի կողմից ստորագրված մեղադրական եզրակացության և դրան կցված հավելվածների հաստատված թարգմանությունները, իսկ քրեական գործով մեղադրյալ Ազիզ Ռզաի Թամոյանը չի տիրապետում հայերենին և անհրաժեշտ է մեղադրական եզրակացությունը թարգմանել ռուսերեն, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 54-րդ հոդվածով, 277-րդ հոդվածի 4-րդ մասով,

ՈՐՈՇԵՑԻ՝

1. Մեղադրական եզրակացությունը հայերենից ռուսերեն թարգմանելու համար որպես թարգմանիչ իրավիքել Հմայակ Ստեփանյանին:
2. Որոշման մասին հայտնել թարգմանիչ Հմայակ Ստեփանյանին, նրան պարզաբանել թարգմանչի իրավունքները ու պարտականությունները և նախազգուշացնել թարգմանչի պարտականությունները չկատարելու համար

նախատեսված պատասխանատվության մասին:

Արմավիրի մարզի դատախազության
դատախազ



Թ.Հարությունյան

Սարգսյան



2. Ապրիլ 17.04.2020

ՈՐՈՇՈՒՄ

Թարգմանիչ հրավիրելու մասին

« 20 » ապրիլի 2020թ.

ք. Արուսյան

Կոտայքի մարզի դատախազության դատախազ, երրորդ դասի խորհրդական Լ. Ա. Նիկողոսյանս, ուսումնասիրելով Արտեմ/ Արտյոմ/ Առաքելյանի՝ քրեական հետապնդման ենթարկելու նպատակով Ռուսաստանի Դաշնության իրավասու մարմիններին հանձնելու մասին ՌԴ գլխավոր դատախազությունից ստացված հարցումը և կից փաստաթղթերը՝

ՊԱՐԶԵՑԻ

2019թ. հոկտեմբերի 2-ին, ժամը՝ 13:50-ին, ՀՀ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի աշխատակիցների կողմից Ծաղկաձոր քաղաքի Մորի Պլազա մասնաշենքի 29-րդ բնակարանից բերման է ենթարկվել և ձերբակալվել ՌԴ իրավասու մարմինների կողմից ՌԴ քրեական օրենսգրքի 228-րդ հոդվածի 1-ին մասի և 228.1-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» և «գ» կետերի հատկանիշներով / թմրանյութեր կամ հոգեմետ նյութեր ապօրինի պատրաստելը, ձեռք բերելը, պահելը, տեղափոխելը, առաքելը կամ իրացնելը / հետախուզվող Արտյոմ/ Արտեմ/ Առաքելյանը/ծնված 16.04.1995թ./:

2020թ. ապրիլի 17-ին ՀՀ Կոտայքի մարզի դատախազության դատախազի կողմից որոշում է կայացվել Արտյոմ Առաքելյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու վերաբերյալ, ուստի անհրաժեշտություն է առաջացել ռուսերեն գրավոր լեզվով այն թարգմանելու:

Հաշվի առնելով, որ Արինե Հարությունյանը համապատասխան կրթություն և փորձ ունեցող անձ է, որն իր մասնագիտական գործունեության ընթացքում թարգմանչական գործառույթներ է իրականացնում և որի ձեռնհասությունը կասկած չի հարուցում, որպիսի պայմանները համապատասխանում են ՀՀ վճռաբեկ դատարանի 2017 թվականի մայիսի 04-ի թիվ ՎԲ-72/07 որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումներին և, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ և 83-րդ հոդվածներով՝


ՈՐՈՇԵՑԻ

1. Արտեմ/ Արտյոմ/ Առաքելյանի՝ նկատմամբ ընտրված խափանման միջոցը փոխելու վերաբերյալ որոշուման ռուսերեն լեզվի գրավոր թարգմանությունն ապահովելու նպատակով որպես թարգմանիչ ներգրավել Արինե Հարությունյանին/ անձնագիր՝ AN 0745803, տրված՝ 09.12.2013թ., 001-ի կողմից, ՀՀ ԱՆ տեղեկանք՝ տրված 10.06.2013թ./ և նրան ծանոթացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներին և պարտականություններին.

2. Թարգմանչին նախազգուշացնել, որ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական գործով թարգմանչի կողմից ակնհայտ սխալ թարգմանություն կատարելը պատժվում է տուգանքով՝ նվազագույն

աշխատավարձի հարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Կոտայքի մարզի
դատախազության դատախազ՝




Լ. Նիկողոսյան

Ստացա սույն որոշման օրինակը, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ և ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածների քաղվածքները:

Իմ իրավունքներն ու պարտականությունները ինձ պարզ են և հասկանալի, ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին նախազգուշացված եմ:

Թարգմանիչ՝



« 20 » 04 2020թ.